

նական վարդապետութիւն կամ քարոզ Արարիչ Աստուծոյ մասին»։ Ամէնքն ընդունում են, որ այս կէտը գալթակցութեան մի մեծ պատճառ է, որ շատ կիսակիրթ մարդիկ ստեղծագործութեան պատմութիւնը քրիստոնէական կրօնի հիմնաքարը համարելով և հակառակ գտնելով այն գիտութեան ցուցմունքներին՝ հետեւեցնում են, թէ քրիստոնէական կրօնն ինքնին անհիմն է ու հակառակ գիտութեան, բայց ինչպէս պէտք է գալթակցութեան առաջն առնել՝ այդ նկատմամբ տարբեր կարծիքներ յայտնուեցան և իրրեւ միջին ճանապարհ ընդունուեցաւ հետեւեալ եզրակացութիւնը. «Համաժողովը եկեղեցւոյ ստիպողական պարտականութիւնն է համարում ցրել այն երեւոյթը, իրրեւ թէ քրիստոնէական հաւատը հակառակ է բանութրական շրջանների դէպի կրթութիւն ունեցած եռանդուն ձգտման, և ամէն միջոց գործ դնել, որպէս զի աւետարանը իւր անկախութեամբ բոլորովին որոշուի իւրաքանչիւր հին կամ նոր բնական տեսութիւնից»։

Այսպէս զոհարանական աղօթքով փակուեցաւ համաժողովը, ինչպէս և սխուիւ էր։ Նոյն օրը ճաշից յետոյ պրոֆ. Սողեւնի նախագահութեամբ տեղի ունեցաւ «Աւետարանական—համայնական կանոնային ժողովը» ուր օր. Մարի Մէլիէն կարգաց անպատասխար և բարոյապէս փտանդում երիտասարդութեան խնամելու գործի մէջ կանանց ունենալիք մասնակցութեան մասին։

ՄԱՐԻ ԱԹԲՈՒ.

Նորին Վեհափառութիւն Ազգիս Սրբազնագոյն Հայրապետը յունիս 20-ին «Գիւտ Նշխարաց» տօնին, շքեղ հանդիսով եպիսկոպոսական օծմամբ պսակեց երեք սառնակահատակ վարդապետների՝ Բարձր. հ. հ. Մազաքիա Տէրունեան, Յովսէփ Սարաջեան և Սահակ Այվասեան։ Պատարագիչ էր Դեր. Արիստակէս և խորտաւիլակ Դեր. Անանիա եպիսկոպոս։ սպասաւորում էին մի քանի վարդապետներ։ Չնայելով որ ձեռնադրութեան լուրը ուշ տարածուեցաւ՝ Երեւանից և ուրիշ շրջակայ տեղերից բաւական մեծ բազմութիւն էր ժողովուելը բայց այնչափ, որ ներկայ եղողներն այս փոքաւոր հանդիսի մանրամասնութիւններն աւելի լաւ դիտել կարող էին, քան եթէ սովորաբար յաջողութեամբ է շատերին՝ ամբոխի չափից աւելի խոնուելուն

պատճառաւ։ Երբ կարգն եկաւ այն հարցման, թէ ի՞նչ վկայագրով են ձեռնադրութեամբ նորընծայ եպիսկոպոսները՝ յայտնուեցաւ, որ Տ. Մազաքիա եպիսկոպոս ձեռնադրութեամբ է առաջնորդ Պարսկաստանի և Հնդկաստանի Տ. Յովսէփ եպիսկոպոս Ամերիկայի Եպիսկոպական հայոց և Տ. Սահակ եպիսկոպոս Ատրպատականի թեմի համար։ Օծման և մատանիների բաշխման կարգը կատարելուց յետոյ Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ խիստ յոգնած լինելով քարոզ խօսել չի կարող և ստիպում է ուրիշ պատահած ասմի թողնել։

Յաջորդ օրը, կիրակի, պատարագիչ էր աւագագոյնը նորընծայ եպիսկոպոսներից՝ Տ. Մազաքիա։ Սրբազանն էր հոգացել նոյն օրուայ միաբանական սեղանի ծախքը։ Ծաշի միջոցին Կարապետ վարդապետը միաբանութեան կողմից բարեմալթութիւններ անելով՝ Դեր. Մազաքիա եպիսկոպոսի և նորա օծակիցների համար կենաց բաժակ առաջարկեց։ Տ. Մազաքիա սրբազան պատասխանելով այդ բարեմալթութիւններին՝ ասաց, թէ իրեն քաջ յայտնի են այն ծանր պարտականութիւնները, որ իւր վերայ դնում է ընդունած բարձր աստիճանը՝ անձուէր քաջ հովուի պաշտօնը, արդի հանգամանքներում. բայց երբ Վեհափառ Հայրապետը վստահութիւն է ունեցել այս վեհ հոգման հրաւիրելու յոյս ունի, որ Նախախնամութիւնը կարողութիւն պէտք է պարգեւէ կատարելու այն ծանր պարտականութիւնները, և ս. Էջմիածնի միաբանութիւնը, որի անդամ գրուեցաւ այս օրից, իւր սրբանուէր աղօթքներով պէտք է աջակցէ առաջը բացուած ասպարիզի վերայ։ Սրբազանը կէքից իւր խօսքը Վեհափառ Հայրապետի և միաբանութեան կենացն առաջարկելով։

Հինգշաբթի, ս. Սահակայ և Մեսրոպայ տօնին, Օշական ս. Մեսրոպի շիրմին ուխտ գնացին կրկին մի խումբ միաբաններ և ժեմարանի աշակերտները։ Պատարագիչ էր Տ. Սահակ նորընծայ եպիսկոպոսը. ժողովուած էր տեղացիների և ուխտաւորների բաւական մեծ բազմութիւն։ Պատարագից յետոյ՝ հոգեւորական դասը, նորընծայ Դեր. Յովսէփ եպիսկոպոսն ի գլուխ խաչի շարական երգելով գա-

«Իժ ելաւ և հոգեհանգիստ կատարեց: Տ. Եովսէփ սրբազանն պատարագչի յոգնածութեան պատճառաւ իւր վերայ առաւ տօնի առթիւ մի քանի խօսք ասելու պարտքը և Հայր Արքայապետի գեղեցիկ օրինակաւ բացատրեց թէ մենք հայերս որչափ աւելի իրաւունք ունենք պարծենալու ս. Սահակի և ս. Մեսրոպի նման հայրերի անուամբ, քան հին իսրայէլացիներն իրենց հայրերով՝ որչափ ուրեմն և աւելի պարտականութիւն սուրբ պահելու նոցա յիշատակը և նոցա շաւիղին հետեւելու: Աթոռապատկան այգում ժամաւորանի աշակերտների վայելած ճաշին ներկայ էին նաեւ երկու նորընծայ եպիսկոպոսներն ու միւս միաբանները՝ զիւղի քահանաներն ու մի քանի պատուաւոր զիւղացիներ և ուխտաւորներ: Ծաշի միջոցին բարեմաղթութիւններ եղան պատարագիչ սրբազանի միւս ներկայ եղողներին՝ Վեհափառ Հայրապետի համար: Կիրակէ օրը պատարագեց և միաբանական ճաշի հրաւիրեց Գեր. Եովսէփ նորընծայ եպիսկոպոսը: Ծաշի միջոցին Բարձր. Աշոտ վարդապետը խօսեց ընդհանրապէս եկեղեցական պաշտօնութեան մասին՝ սկսելով ս. Թագէոս և Բարթողիմէոս առաքելներից, ապա մասնաւորեց իւր խօսքը եպիսկոպոսական իշխանութեան վրայ՝ օրինակներ բերելով և ցոյց տալով դուրս նշանակութիւնը մեր եկեղեցւոյ պատմական անցեալում: Ապա խօսքն ուղղեց նորընծայ Գեր. Եովսէփ եպիսկոպոսին և յաջողութիւն մաղթեց նորան նոր կոչման և նոր պաշտօնի մէջ՝ յիշելով թէ առաջին օրինակն է այսօր Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրութեամբ եպիսկոպոս հովիւ է ուղարկուում Ամերիկայի հայ գաղթականութեան համար: Նորընծայ սրբազանը իւր շնորհակալութիւնը յայտնելով այդ բարեմաղթութիւնների և առհասարակ Մայր Աթոռի միաբանութեան կողմից գտած սիրալիր ընդունելութեան համար մատնանիշ արաւ թէ որքան զգուշ է իւր ստանձնած պաշտօնը, որովհետեւ այլ է իրրեւ վարդապետ գնալ Ամերիկա և այլ իրրեւ եպիսկոպոս գնալ, ասաց թէ ինքը ոչ մի ջանք չպիտի խնայէ իւր վրայ դրած ծանր պարտականութիւնները ճշգրտութեամբ կատարելու, քանի որ անցեալումն էլ հնազանդ է եղել

միշտ իւր իշխանութեան հրամաններին և ամենայն յանձնառութեամբ զանազան հոգեոր պաշտօններ կատարել հին և նոր աշխարհներում: Ապա խնդրեց Մայր Աթոռի սրբազումը միաբանութիւնից, որ աղօթեն իւր համար, որպէս զի կարողանայ իւր գործը յաջողութեամբ տանել, յայտնելով իւր իղձը՝ լինել և մնալ հաւատարիմ անդամ այդ միաբանութեան:

Սինոդի աւագ անդամ Գեր. Սարգիս արքեպիսկոպոսն յունիս 22-ին արձակուրդ առնելով իւր հայրենի Ղարաբույաղ գիւղը գընաց՝ ամառն այնտեղ անցնելու և կաղզուրուելու համար: Ծախանդամութեան պատիւն անցաւ այսպիսով առժամանակ Գեր. Արիստակէս եպիսկոպոսին, որի բաղձամեայ հաւատարիմ ծառայութիւնը գնահատելով՝ Վեհափառ Հայրապետն արքեպիսկոպոսական աստիճան շնորհեց Սրբազանին:

Սինոդի նորահաստատ անդամ Գեր. Եսայի արքեպիսկոպոսը Եունիսի 19-ին երդումն տալով սկսեց իւր նոր պաշտօնը:

Եունիս 6-ին պաշտօնավարութիւն սկսեց նաեւ միւս նորահաստատ անդամ Բարձր. Եունիկ վարդապետը, որ յունիս 1-ին ողջամբ Մայր Աթոռ է ժամանել:

Մայր տաճարի աւագ լուսարար Գեր. Մակար եպիսկոպոսն արձակուրդ առնելով յունիս 8-ին ուղևորուեց դէպի Արասթուման՝ իւր առողջութիւնը վերականգնելու համար: Աւագ լուսարարի պաշտօնը վարում է առժամանակ ժամօրհնող Բարձր. Ղեոնի վարդապետը: Իսկ Արարատի կրօնական բաժնի գրաքննութեան պաշտօնի մէջ, մինչև Մակար սրբազանի վերադարձը, հաստատուեցաւ Տ. Կառավարչապետի հեռագրով Բարձր. Աշոտ վարդապետ:

Յունիս 25 մեկնեց Արժ. Մերուպ վար-
դապետը՝ Հին Նախիջևան գնալու և այնտեղ
Հոգեւոր կառավարութեան ինչ ինչ գործերը
քննելու համար:

Տփլիսաբնակ Ալէլեանք յօժարութեամբ
յանձն առան իրենց ծախքով մշտապէս ու-
ղարկելու Մայր Աթոռի Ճեմարանից ելած
երիտասարդ սարկաւազների հերթով Ռուսաս-
տանի համալսարանները: Վեհափառ Հայրա-
պետն այս առաջին անգամ արժանաւոր հա-
մարեց ընտրել Ճեմարանի նախկին սան և Մայր
Աթոռի միաբան շնորհունակ Ներսէս սարկա-
ւազ Տէր Միքայէլեանցին: Եւ բարեհաճեց
ուղարկել Մոսկուայի համալսարանը՝ իրաւա-
բանութիւն ուսանելու: Շնորհունակ Ներսէս
սարկաւազը մեկնեց գէպի Մոսկուա մայիսի
12-ին:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք:

Ս. Պատրիարքը տեղեկանալով որ Ուրֆա-
յի միսինարութեան հաստատած որանոցին մէջ
կարգիչուի հայ մանուկներու հաղորդուիլը՝ վար-
չական դիւանապետ Բարթող Էֆէնտի Թէլեանի
յանձնարարեց Պայպը Հաուզ երթալ և այդ մա-
սին բանակցիլ Մըսթըր Հերիկի հետ:

Թէլեան Էֆ. շարաթ օր բանակցեցաւ Մըս-
թըր Հերիկի հետ: որ խոստացաւ գրել նոյն հաս-
տատութեան տեսչին: որպէս զի հայ մանուկները
թոյլաւորուին իրենց եկեղեցին երթալու և հա-
ղորդուելու:

— Մայրաքաղաքի հայ մամուլին վերջին տասնը-
հինգ տարիներու ամենէն կարեւոր օրկանը՝ Արեւելի,
որ ասկէ առաջ խափանուած էր: այս անգամ Պայ-
սերական Իրատեով արտօնուեցաւ ըստ առաջնոյն
հրատարակուելու:

— Կըսուի թէ Գրիգոր Էֆ. Գարակէօզեանի
կողմէ առաջարկուած կարգադրութիւնն: որ Ազգա-
յի Յանձնաժողովին կողմէ սկզբամբ ընդունուեր է
արդէն: սա է որ ինք Գրիգոր Էֆ. 5,000 ոսկի
արժէքով պիտի կառուցանէ ազգային դպրոցի շէնք
մը: ազգային գետնի մը վրայ: առեւտրական ուսում-
ներու ծառայելու համար: և վեր ի վերոյ 15,000
ոսկիի արժէքով ալ միւլք կալուածներ ս. Փրկչի

հիւանդանոցին վազֆ պիտի ընէ՝ եկամուտներն
յատկացնելով յիշեալ վարժարանին: մասամբ ալ
հիւանդանոցին: ինչպէս և նոյն կալուածներուն պահ-
պանութեան: Բայց այս կալուածներուն և այս վար-
ժարանին մատակարարութեան և տնօրէնութեան
համար Ազգ. վարչութենէն անկախ մնայուն խը-
նամակալութիւն մը պիտի կազմուի: որուն ատե-
նապետը պիտի ըլլայ ինք Գրիգոր Էֆ.: և իրմէ
ետքն յաջորդարար ուրիշ Գարակէօզեան մը: մըլ-
տապէս:

— Ս. Հայրապետ Երուսաղէմի Պատր. փոխա-
նորդ Տ. Գեորգ Եպս. ի յանձնած էր 500 մանէթ՝
նուիրեալ աղա Պանիէլ Յունանեանէ: որպէս զի
եկեղեցական գրքեր գնուելով նուիրուին գաւառա-
կան կարօտ եկեղեցեաց: Տ. Գեորգ Եպիսկոպոս
պոյ գրամով 293 կտոր եկեղեցական զանազան գրք-
քեր բերել տուաւ Երուսաղէմի տպարանէն և ս.
Պատրիարքին յանձնեց՝ հարկ եղած տեղերը ղըր-
կուելու: Ն. Սրբաղնութիւն օրհնութեան գիր մը
ղրկեց նուիրատուին:

— Կեսարիոյ Առաջնորդ Տ. Տրդատ Ժ. վ. առա-
ջարկեց Պատրիարքարանի որ Պոռ Էրիյլ և Աքսէրայ
գիւղաքաղաքներն ալ միացուին Գոնեայի նորահաս-
տատ Վիճակին: Այս առաջարկ յանձնուեցաւ խառն
ժողովին:

— Աղդ. Պոլսոյ առաջն. Տեղապահ Տ. Պօղոս
Ժ. վ. Խոյտաժեանի պաշտօնին հրամանագիրն յան-
ձնուեցաւ ի Պատրիարքարան: Տ. Պօղոս Ժ. վ. ի
մօտոյ պաշտօնատեղին պիտի ուղևորուէ:

— Անտիոքի գիւղերու կրօնական վիճակն ար-
դահատելի է. օտար կրօնաւորք մեծ փութաջանու-
թիւն ցոյց կուտան հոն գրամի միջոցաւ իրենց հօտը
շատցնելու: Խնիկեացի Տ. Կարապետ քահանայն: իր
մայրենի եկեղեցին թողելով՝ լատինականութեան յա-
րած է: Այս գիւղն ասկէ քանի մը տարի առաջ բնաւ
օտար եկեղեցական պաշտօնեայ մը մուտ չի գտներ ե-
ղեր: հայ բարձրաստիճան եկեղեցական մը գիւղացիի
տոկոսով գրամ կուտայ եւ ի վերջոյ գիւղացին վճարե-
լու վիճակի մէջ չըլլար: ասոր համար յիշեալը բան-
տարկել կուտայ և շատ մը անարգանաց կենթարկէ:
մարդը սրտին ցաւէն լատին կըլլայ եւ այսօր լա-
տիններն յիշեալ միջոցաւ հոն ամէն բան ունին:

— Բաղէշի առաջն. Տեղապահ Եղիշէ վարդ.
2 իլինկիրեանի և տեղւոյն Խնդրակատարի փանուց
Որբանոցին հոգաբարձութեան կողմէ Որբանոցին
նկատմամբ Ս. Պատրիարքին ուղղեալ գրութենէ մը
հետեւեալ շահեկան տեղեկութիւնները կ'ըսենք:

— Որբանոցը կապտսպարէ 32 որբ: որոց 19ն քա-
ղաքին զանազան թաղերէն եւ 13ը գիւղերէն: Առ
այժմ կան շորս պաշտօնեայ (1 ուսուցիչ: 1 կա-
ռավարիչ-գիշերապահ: և 2 սպասուհի—մայրապետ)
վճարուող: Որբերէն մին որդեգրուած է տեղւոյն
ազգայիններէն Մուրատ աղա Զօղանեանի՝ տարեկան

չորս ոսկիի նուազ գումարին փոխարեն, ի քաջալերութիւն տեղացւոց, Տարրական ուսումներ միայն կաւանդուին, գիշերային աշխատութիւններով մեկտեղ օրական ինն ժամ՝ դաստիարակութիւն եւ սերտողութիւն կըլլայ, Որբանոցն՝ հակառակ իր համեստ ծրագրին՝ բաւական զոհացուցիչ է և յառաջդիմութեան շաւղին մէջ մտած է. ջանք կըլլայ Ա. ուսուցիչ մը ևս աւելցնել, 32 որրոց և 5 պաշտօնէից տարեկան ծախքն է. — 37 անձի ուսեւտ՝ 12,600 դրշ, Փայտ, ածուխ, կաղ, ածառ եւն 1000, հինգ պաշտօնէից՝ ամսական 400-էն 48,035 ձեռք զգեստ 2275, 35 ձեռք անկողին 1925, սեղանի սպաս և խոհանոցի անօթ 400, մահճակալ 1400, Գումար 24,400 դրշ, Այս գումարի 13,392 դրշն ապահովուած է Ս. Պատրիարքին միջոցաւ վճարելի տարեկան 120 ոսկիով և Զօղանեան Մուրատ էֆ. ի որբի մը համար վճարելիք տարեկան 4 ոսկիով, Իսկ մնացեալ 11,008 դժ. ի բացը կը յուսան գոցել մօտակայ վանքերու յաւելեալ հասոյթներով մանաւանդ հանգանակութիւնով, Խնդրակատարի մէջ կարելի է մինչև 100 որբ պահել, եթէ ծախքերն ապահովուին, Հոգաբարձութիւնը կնորհի արհեստարան մը հաստատել, և պատասպարեալ որրոց մեկնելէն առաջ տեղական արհեստ մ'էս սովորեցնել, Սակայն այս փափաքն իրագործուած տեսնելու համար կնիդրեն որ ամսական հինգ ոսկի նպաստ մ'էս յատկացուի բացէն, Այս ուրախաթիւ լուրերն արձանագրելով՝ հրապարակաւ կոչում կընենք բարեսէր անձանց, նուիրատուութեամբ մը ապահովելու արհեստանոցի մը հաստատումն առ այժմ միայն Խնդրակատարի Որբանոցին մէջ.

— Վանայ առաջն. Տեղապահ Ստեփան ծ. փ. Աղապատեան կգրէ Պատրիարքարանի թէ Անգղիւզացի Տ. Արսէն նորրնձայ քահանան իր ձեռնադրուած գիւղը՝ Սեան՝ հասնելով կը գտնէ կարգ մը շքաւոր տղաք, որք մոռցած էին իրենց ծագումը. Տ. Արսէն քահանայ Որբանոց մը կ'հաստատէ Սեան գիւղի մէջ և հոն կ'պատասպարէ և կ'նսնամէ 30 ի չափ տղաքներ, հասոյթի հայթայթման համար քանքե խնամք ի գործ դնելով:

— Խառն ժողովն իր 12 յունիս նստին մէջ Սգերդի առաջնորդական Տեղապահ կարգեց Արմաշի Տ. Փառէն վարդապետն, որ ժամանակէ մ' ի վեր Պատրիարքարանի մէջ քարտուղարական պաշտօն կ'վարէ:

— Տ. Յարութիւն ս. Պատրիարք Հօր մասնաւոր հոգածութեամբ և անձնական ծախքով երուսաղեմի ս. Աթոռոյն դարաւոր և շատ կարեւոր մէկ պէտքն ալ զօհացում կըգտնէ, երկու շաբաթ առաջ սկսուեցաւ և կ'շարունակուի ս. Փրկչի վանուց արտաքին շրջապատն ամբողջովին սրբատաշ քարերով պատելու գործողութիւնը, Ս. Փրկչի Վանքը մեղ և միւս քրիստոնէից համար շատ նշանաւոր

սրբավայր մ'է՝ որովհետև Սիօն լեռան ճիշտ կատարը, Պայափա քահանայապետի պալատին տեղիչն վրայ կ'առուցուած է, և իր համանուն եկեղեցին մէջը կ'պարունակէ Քրիստոսի Բ. Բանտն և այն կափարիչ մեծ քարն, որով Փրկչի գերեզմանին դուռն երեք օր գոցուած մնաց, Ասոնցմէ զատ եկեղեցւոյ զաւիթը կ'գտնուին Պատրիարքներու և նշանաւոր եպիսկոպոսաց գերեզմանները, նա մանաւանդ ս. Աթոռոյն երկու մեծանուն արժանի Պատրիարքաց, — անուանակից և գործակից Պարոնտէր և Շղթայակիր Գրիգորներու նուիրական շիրմները:

— Հայագէտ և հայախօս ուս. Բրոֆ. Ն. Մառ, որ երկու ամիս առաջ մայրաքաղաքէն անցնելով Այնտրոզ գացած էր այնտեղի վրաց վանքի ձեռագիրներն հետազօտելու, Պիր. Պոլիս դարձաւ և 22 յունիս առաւօտ Տ. Յովհ. Մկրեան Հօր միջոցաւ ս. Պատրիարքին հետ տեսակցեցաւ, Յայտնեց թէ իր ուղևորութիւն խիստ օգտակար եղած է. զի այդ վանքի մէջ գտեր է վրացերէն հին ձեռագիր մը, վրկայաբանութիւն Սրբոց, որոյ մէջ ս. Սահակ Պարթևի և սրբոց Առաքմանց և այլ սրբոց պատմութիւնը գրուած և հայերէն լեզուէ թարգմանուած լլլալը նշանակուած է, Նոյնպէս գտեր է վրացերէն Հին և նոր Ստակարան, դարձեալ հայերէն լեզուէ թարգմանուած, Ասոնցմէ մեծ աշխատութեամբ ընդօրինակութիւններ ընելով պիտի վերադառնայ քիչ օրէն ի Ռուսիա, իր հետազօտութեանց արդիւնքն հրատարակելու:

— Այս տարուան Իգմիրեանց մրցանակէն 30 ոսկի Տ. Բարգէն Ծ. Վ. Ի պիտի տրուի եղիշէի ուսումնասիրութեան համար, և 30 ոսկի Տ. Մուշեղ Ծ. Վ. ի նարեկի թարգմանութեան և քնննութեան համար, եղիշէի ուսումնասիրութիւնն Յանձնաժողովին կողմէ զրկուած էր Գարագաշեան էֆ. ին ի քննութիւն, Բայց այս անգամ Գարագաշեան էֆ. ի ծերութեան և տկարութեան պատճառաւ, չկրցաւ յանձն առնուլ քննութեան գործն, և Թովմաս էֆ. Թէրզեան կատարեց այս պաշտօն, նարեկայ թարգմանութեան և ուսումնասիրութեան քննութիւնն ալ յանձնուեցաւ Տ. Խորէն Արքեպիսկոպոս Աշքեանի, որոյ տեղեկագիրն ևս պիտի կարդացուի առաջիկայ ԵՃ. ի տարեկան հանդիսաւոր ժողովին մէջ, Աւելորդ է բնել թէ երկու քննիչներն ալ յոյժ հաւնած են իրենց զնահատութեան մատուցուած աշխատութիւններուն:

ԲԱՂԷՇԻ ՎԱՆՔԵՐԸ.

Գամաղիէլ. — Հեկու գիւղին կից (Խիզան), 10 ժամ հեռի. երբեմն չէն:

Մորոսայ վանք. — Ս. Թովմաս համանուն գիւղին մօտ (Խիզան) 13 ժամ հեռի. ունի վանահայր, վարուցան ևն:

Ետեմ խորանից վանք.— Բրուներ գեղին մօտ (Խիզան), կիսաւեր. ունի քահանայ մը Վանքիւնէր վանահայր ըսուած:

Ապարանից Ս. Խաչ.— Համանուն գեղին մօտ (Խիզան) բարձրագիր, ընտան մը կողի վրայ, իր նրբակերտ քանդակներով ու հոյակապ շինուածով է հրաշալիք նախկին ճարտարապետութեան:

Սորուայ Ս. Աստուածածին.— Սորփ գեղին մօտ, այժմ անքնակ, ունի հրաշակերտ տաճար, գմբէթ սիրուն, հին ռժով:

Ամբողջայ Ս. Յովհաննու վանք.— Բաղէշի մէջ, եկեղեցին հոյակապ, շրջափակի շէնքեր նորոգութեան կարօտ, Թափառական և առժամանակեայ քահանաներով երբեմն կրացուի այդ պատմական սրբավայրին եկեղեցւոյ գուռը, կարծես հեգնելու յաւիտեանական քունով և երանութեամբ հանգստացող անմահ հոգիներու շիրիմները:

Շէխիս և Սիւն.— Երկու դարերէ ի վեր անունին հազիւ կ'իշխուի:

Գոմից Ս. Աստուածածին — Համանուն տրուարձանին մօտ, քաղաքին հիւսիս-արևմտեան զին, փոքր ու սիրուն, եղական օդով ու ջրով օժտուած, Թաղէոս առաքելէն հիմնուած կկարծուի:

Խնդրակատար Ս. Աստուածածին.— Քաղաքին հարաւակողմը, փոքր դաշտի մը մէջ, նորաշէն ու հոյակապ: 19 դար առաջ, ըստ աւանդութեան, երբ Թաղէոս առաքել այս կողմը քարոզելու կուգայ, այն դաշտին մէջ կանգ կանու և աղօթքի կկենայ տօթակէզ արևուն տակ. երկնային նշանի մը կսպասէ գիտնալու համար թէ պիտի արդիւնաւորուի իր վարդապետութիւնը: Այս խոմանց մէջ, զովարար ամպ մ' կծածկէ զինք, և ձայն մը քաջալերութիւն կկարգայ, կսմթի, կփառաւորէ Ամենակալը, կեցած տեղը կկոչէ ամպ, այժմ համար գիւղը, որուն անմիջապէս զիմացը կը կառուցանէ «Խնդրակատար» վանքն յանուն Ս. Աստուածածնի նուիրեալ:

Ս. Յակոբ.— Յիշեալ համար գիւղին փոքր եկեղեցին է, բայց երբեմն մեծ ուխտատեղի:

Ավետիս Ս Թաղէի վանք.— Քաղաքին կից, արևելքն, ունի եկեղեցի մը սիրուն ու ճարտարարուեստ վանքը կիսափուլ, քանի մը անդապահ ծառաներ: Աւրիշ վանք չկայ ասոր մօտ: Կըսուի թէ պարսիկ աղջիկ մը, բորոտութենէ վարակուած, լքուելով իր ծնողաց կողմէն այս տեղեր, կգիմէ Ս. Թաղէի այս վանքին, անոր աղբիւրին ջրով ցնել կպատրաստէ և վրան քնելով կրօնժուի. ասկէ կառնէ Ավետի անունն, որ քրդերէն կնշանակէ ջուր ու զիտ, ավ-նիս բառերէն աղաւաղուած, մինչև հիմա ալ նոյն ջուրն ամենաբոյժ ծանշցուած է, բայց... հաւատացողին:

Յիզդիսիւղտ.— 315 ժամ հեռի, Թուս գիւղին մօտ, Դատուանի ծովին վրայ, իր աւերակները թախծութեամբ կգիտեն ծովի փրփուրն և զինք

շրջապատող անտառը: Հողը թուխեցւոյց մէջ բաժնուած:

Ծապրկորի Ս. Կարապետ.— Միայն տաճարը կանգուն, բոլորովին փլշած, կաշուածները կորսուած, Ծապրկոր թաղին հիւս-արևելեան զին, Իր ծերունի ժամկոչը կիր, օրեր կը փութայ իր սիրելի սուրբին խունի ծխել, Հրաշագործ է ասոր սառնորակ ջուրն ալ, ուխտաւորները անպակաս:

Պօռայ Ս. Նարեկացի.— Շէն, ունի վանահայր վարդապետ մը:

Մօճկոնիսի վանք.— Կանգուն, այլ անտէր, հողը գիւղացւոյց ձեռք:

Ծղակայ Ս. Աստուածածին — Կանգուն, անքնակ նոյնպէս:

Մուսկայ վանք (Յուսիկ). — Կիսափուլ, սոսկ ուխտատեղի Ջրհոր գիւղին մօտ:

Ս. Գէորգ.— Շամիրամի մօտ, 315 ժամ հեռի, շէն:

Թեղուտի Ս. Աստուածածին, 6 ժամ հեռի, համանուն գիւղին մօտ, շէն:

Մատնափանք.— Ախլաթի Խարապաշար գիւղին մօտ, շէն:

Ս. Աղբերիկ, Նշանաւոր վանք, թանիրի մէջ միկած աղջիկ մը կենդանացնելուն կրսուի գործըյաւոյց (գործելի—ածուխ), Ս. Աղբերիկ շէն է, ունի միաբանութիւն:

Ս. Կիրակոս.— Մօտկանի Գղեկ գիւղին մօտ, 4 ժամ հեռի, հաշակաւոր ուխտատեղի, ուր ցայսօր ամէն Վարդափառի, կգոհուին բացի անթի, հաւէ ու աքաղաղէ 500ի չափ ոչխար, Քուրդ և հայ 2—3000 ուխտաւորներէ, ամենաբոյժ կարողութիւնն ակնատեսներ կհաստատեն:

Ս. Գէորգ.— Մօտկանի Դրձէնք գիւղին մօտ, կանգուն, անքնակ, ունի 200 ընկողի ծառ, ուխտաւորը կրնայ ուտել, բայց տանողի տունը կը քանդուի: 3 ժամ հեռի:

Ս. Գանիէլ.— Մօտկանի Աշպներ գիւղին մէջ, կանգուն:

— Կորվու գիւղն ունի 12 սրբատեղիներ: Ս. Աստուածածին, Գամաղիէլ, ս. Փրկիչ, ս. Յովհան, Երեք-Մանկուլք, Ս. Գէորգ, և ուրիշ վեց ալ որոց անունները չկրցի գտնել, Միայն Երեք-Մանկուլքը շէն է:

Ս. Յովհաննէս, Երուն գիւղին մօտ, աւեր, 4 ժամ հեռի:

Այս և ուրիշ շատ մը սրբատեղիներ որ անծանօթ են, բարեպաշտ ժողովուրդն իր սիրական մէկ սուրբին անունով մկրտած, յատուկ ուխտի օրեր սահմանած, ամէն տարի կերթան եղեր, տօնելու փողերով, թմբուկներով ու խրախճանքով: Այս ուխտապնացութիւնը մինչև հիմա կկոչուի ռաւակը, զոր մեկնեց պարսկագէտ Վարդան Էֆ. Չուխաճեան իրրև աղաւաղում շաթի-սէր պարսկէն բռնին, որ կնշանակէ տուրախութիւն—եկեղեցւոյ:

ՊԵՐՍՊԵԿՏԻՎ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԵՄԻՆ ԼԵՅՈՍ ԼՏՐՊԵՏԱԿԱՆԻ. *

Ատրպատականում հայերը ցրուած են բնակուում և ոչ մի գաւառում մեծամասնութիւն չեն կազմում: 1828 թուի գաղթականութիւնը հայոց պատկառելի թիւը նուազեցրել է և այնուհետև ժողովուրդը շատ չէ կարողացել աճել: որովհետև առևտուրի կամ ուրիշ հանգամանքների բերմամբ մասնաւոր փոքր գաղթականութիւններ չեն պակասել: սրան իրր հակակշիռ եղել են Տաճկահայաստանի սահմանակից գաւառներից գաղթած և Ատրպատականում հաստատուած հայերը: Աերջին Ռուս—թրքական պատերազմի պատճառով Աղբակի գաւառից բազմաթիւ ընտանիքներ Սալմաստ հաստատուեցան: և արդէն այժմ տեղացի են համարուում: իսկ վերջին դժբախտ դէպքերի պատճառով գաղթածներն անորոշ տատանեալ դրութեան մէջ են դնու: միայն Մակուայ գաւառում ա. Թագէի վանքի մօտ կազմել են մի գիւղ 60 տնից բաղկացած և 10 տուն էլ տեղաւորուած են վանքի գիւղում: Սալմաստում եղող 500 տուն գաղթականները դեռ չեն տեղաւորուել:

Պարսիկ կառավարութիւնը քաջ ծանաշելով թէ հայերը ինչ աստիճան կարող են օգտակար լինել երկրին՝ աշխատել է ամեն կերպ սիրաշահել: արտօնութիւններ տալ: Ուսումնասիրութեան մեծ նիւթ կարող են լինել Շահերից և Շահզատէներից Ատրպատականի Առաջնորդներին դարերէ ի վեր տրուած արտօնութիւններն և իրաւունքները: Որովհետև Պարսկաստանում ամեն դատ Շէրիով է վճռուում: հայերը Շէրիին չենթարկուելու կամ պարսից պաշտօնէից քմահաճոյքին խաղալիկ չլինելու համար: ունէին քրիստոնէայ կառավարիչ: որ կոչուում էր սարփարաստ: հայի ամեն մի տուն սարփարաստի ապրուստի համար տալիս էր տարեկան 20 կոպէկ խնամարի անունով: որովհետև ինչպէս բոլոր փոքր պաշտօնէից նոյնպէս սարփարաստին ուժիկ չէր տրուում: բայց հայոց դատերը սովորաբար Առաջնորդներին են յանձնուում: շատ քիչ անգամ կպատահի: որ առաջնորդի վճռած հարցը կառավարութիւնը չհաւանած կամ վաւերացրած չլինի: Ժողովրդի կողմից բողոք: դատ պատահած ժամանակ սարփարաստին գրամական մի փոքրիկ

նուէր կամ մի գլուխ շաքար էր տրուում: Սակայն ժամանակները փոխուեցան: ծախքերն աւելացան: սարփարաստութիւնը հրապուրիչ պաշտօն դարձաւ: քրիստոնէաները հեռացուեցան այդ պաշտօնից և միայն թուրքերին տրուեցաւ: և որովհետև բարձր պաշտօնեաները ստորագրեալից կաշառք են առնում՝ անպատճառ՝ վերջիններս նոյնպէս ստիպուեցան ժողովուրդը ըստ կարգին կողոպտել: սակայն այս մասին յետոյ:

ԹԵՄԻՆԶ ԲԵՂԱԲ.

Ատրպատականի Հայոց կենդրոնը Թաւրիզը լինելով՝ այս քաղաքից և սկսելք մեր խօսքը: — Թաւրիզը շինուած է Ուրմիոյ լճի արևելեան կողմը 70 վերստ հեռի: կարմիր լեռանց ստորոտը: Աճի գետի ափին մի ընդարձակ դաշտաւայրում՝ ծովից 4700 ոտք բարձրութեամբ: օդը չոր է և առողջարար: ամառը թէև տաք: սակայն արևի մայր մըտնելուց մի քանի ժամ առաջ արևելեան հարաւային կողմից փչող հողմը մեղմացնում է եղանակը: ջուրը նուազ է: ամեն տուն ունի իւր ջրամբարը: ուր 3—6 ամիս ջուր է պահուում: Թաւրիզը ըստ արևելեան պատմագիրների շինուած է Բ. դարում: — էլ — Ռաշիտի Զիրէյտա կնոջից: իսկ հայկական աւանդութիւնն այս քաղաքի շինութեան մասին յայտնի է արդէն: Եւրոպացիները ենթադրում են: որ սա Պտղոմէոս աշխարհագրի յիշած Գարբիս կամ Տարբիս քաղաքն է: նշանաւոր հրնութիւններ չկան: երկրաշարժը շատ վնասներ է տուել: իբրև հսութիւն յայտնի է քաղաքի արևելեան դրան մօտ Թէհրանի ծանապարհի վերայ կիսաքանդ Աեօբ—մէջիզը: և քաղաքի կենդրոնում միջնաբերդը: որ արքէ է կոչուում: Ընկերից նշանաւոր են թագաժառանգի պալատը: աւագանեաց ապարանները: Լիւաբատի նորակառոյց աղջկանց ուսումնարանը: բազմաթիւ քարվանսարանները: Ունի խիստ ընդարձակ շուկայ: Թաւրիզի բնակիչներն են թուրքեր: հայեր և քիչ եւրոպացիք: որ վաճառականութիւնով են զբաղուած: Աճի գետը անցնում է քաղաքից մօտիկ հիւսիսային արևմտեան կողմից: վրան մի հոյակապ կամուրջ կայ 18 ակն ունեցող: Պարսկաստանի ամէնից բազմամարդ քաղաքն է Թաւրիզ: առաջ մինչև 1/2 միլիոն բնակիչ ունեցել է: այժմ մօտ 150,000 է համարուում:

Հայերը բնակուում են երկու թաղերում՝ Ղաւայում և Լիւաւայում: ունին երկու եկեղեցի: Ղաւայումն է Հայոց Արքեպիսկոպոսարանը: տպարանը: բաւական ճոխ գրադարան: Արամեան երկսեռ վարժարանը: Թատրոն: Լիւաւան ևս ունի երկու սեռի համար ուսումնարաններ: որ Թուամանեանց յայտնի վաճառականներն իրենց ծախսով կառուցել են: աղջկանց ուսումնարանի շէնքը իր

* Ատրպատականի առաջնորդարանի կողմից ներկայացրած մի պաշտօնական ընդարձակ անդեկագրի կարեւոր մասերը միմեմ եւմ ստանով հասնում առ հասնում հրատարակի:

յարմարութեամբ և ընդարձակութեամբ մի հատիկ է. երկու թաղումն ևս կան աղջկանց արուեստանոցներ, մանկական պարտեզ, Թաւրիզ հարուստ է նաև ընկերութիւններով. Լիւալայում՝ «Թաւրիզի հայուհեաց բարեգործական ընկ.»-ը որ աւելի հին և հարուստ է, Ղալայում՝ «Ատրպատականի հայուհեաց բարեգ.» ընկ.»-ը որ աւելի նոր է. վերջերս հաստատուեցաւ և մի լսարանական ընկերութիւն, որ օգտակար դասախօսութիւններ պիտի անէ, Թաւրիզում սունկի պէս բնուած և շուտ անյայտանում են ուրիշ բազմաթիւ ընկերութիւններ. ամենից տեական եղել է Ղալայի գրադարանական ընկ. որ քառորդ դար զոյութիւն ունի, պահում է գրադարան—ընթերցարան, մօտ 2000 գիրք ունի և բաւական լրագիրներ է ստանում. Հայերը իրենց մտաւոր զարգացման համար անտարբեր չեն, ուսումնարանները բաւական կանոնաւոր վիճակ ունին. Արամեան ուսումնարանն ունի մինչև 4-րդ դասարան, տարեկան մօտ 10,000 ր. ծախս. Պարսից կառավարութիւնը տալիս է նպաստ տարեկան 160 թուման (320 ր.), Ռուսաց պետութիւնը 500. միւս հասոյթներն են դրամադիւի տոկոսը, աշակերտաց թոշակագրամը, Ղարադաղի գիւղերի և Տաղարիւնի այգիի վարձակալութեան արդիւնքը, բայց դարձեալ տարեկան բաւական բաց է մնում, որ վիճակաւորով, թատերական ներկայացումով և այլ միջոցներով պէտք է ծածկել. Լիւալայի ուսումնարանը երկդասեան է, տարեկան ծախս 3300 րուբլի. այս թաղի եկամտից աղբիւրները նուազ են, կառավարութեանց նպաստները միայն Ղալան է ստանում՝ առանց աղքատ թաղին բաժին հանելու. Թումանեաններն ուսումնարանի չէնքեր կառուցանելով նպատակ ունենին նաև ծախքերը ապահովել, բայց մեզ անյայտ պատճառով իրենց մտադրութիւնը մինչև այսօր չիրագործեցին. Հայոց կրթական այս վեց հաստատութիւններից գատ (2 տղայոց, 2 աղջկանց ուս., 2 մանկապարտեզ՝ առանց հաշուելու արհեստանոցները) Ամերիկացի միսիոնարներն ևս ունին տղայոց և աղջկանց ուսումնարաններ, ուր աւելի յաճախում են Թաւրիզեցի աղքատ տղայք և գաւառներից բերուած գիշերօթիկ աշակերտները, Թաւրիզ իրեն մայրաքաղաք և աւելի միջոցների տէր հարկ էր որ մտածէր նաև իրեն ենթարկուած վիճակների մասին. մօտ քառորդ դարի ընթացքում՝ կանոնաւոր ուսումնարանը յառաջ բերելու էր մի սերունդ, որ քիչ շատ հետաքրքրուէր խեղճ տգէտ գաւառացիների մասին. քանի որ այդ տեղերում ոչ մի ուսեալ քահանայ և տեղացի զարգացած ուսուցիչ չկայ, Թաւրիզի հայերը լինելով վաճառական՝ այնպիսի մի ուղղութիւն են տուել իրենց ուսումնարաններին, որ աւարտողները անպատճառ վաճառականի գործակատար են գառնում, կարծես ուրիշ ասպարէզ չկայ այլևս. գաւառների կրթական

գործը այս կերպով հետզհետե բողոքականների ձեռքն է անցնում, որոնք Թաւրիզի իրենց վարժարանի աշակերտները գաւառներն են ուղարկում.

Ատրպատականի առաջնորդութիւնը 50-ական թուականներին միայն ս. Թադէի առաքելոյ վանքից Թաւրիզ է փոխադրուել. Սաթուհեան Սահակ եպիսկոպոսը շինել է Առաջնորդարանը և Արամեան վարժարանը, որ ժամանակին նշանաւոր չէր կարող էր համարուել. այժմ առաջնորդարանը խախտւած է և վերաշինութեան պէտք ունի. Տպարանը հաստատել է Միթիթարան եպիսկոպոսը. Առաջնորդարանը ունի տարեկան 1700 րուբլի եկամուտ, որ ամբողջապէս առաջնորդի տրամադրութեան թողուած է. այս գումարից են առնուում Առաջ. բոլոր ծախսերը, պաշտօնէից ոռճիկները, Պատավարութիւնը Առաջնորդարանի տրամադրութեան տակ դրել է մշտապէս 2 զինուոր. սոցա ոռճիկները եկեղեցին տալու պարտաւոր է՝ իւրաքանչիւրին ամսական 1 րուբլի 40 կոպէկ.

Հայերը զանգահարելու իրաւունք չունին. զանգակները եկեղեցու ներսումն են. հանգուցեալ Ստեփաննոս եպիսկոպոսը մեծ համարձակութեամբ յաջողել է Ղալայի եկեղեցւոյ գմբէթին մի խաչ դնել. Լիւալայի եկեղեցւոյ գմբէթը առանց խաչի է.

Ղալայումն են Ռուսաց, Անգլիացւոց և Թրքաց հիւպատոսարանները. եւրոպացիների տները, Ֆրանսիական հիւպատոսարանը և Ամերիկացի միսիոնարաց գլխաւոր հաստատութիւնները Լիւալայումն են:

Ռուս-Պարսկական պատերազմից յետոյ հայ արհեստաւորները ամեն տեսակ տուրքից ազատ էին. մի քանի տարի առաջ կառավարութիւնը փորձեց այդ իրաւունքը խլել, այժմ փոքր քանակութեամբ տուրք առնում է.

Թաւրիզում ապրում են 580 տուն հայեր, բայց այս թիւը միշտ փոփոխական է. քանի որ նոր բնակութիւն հաստատողներ և հեռացողներ անպակաս են. այժմու բնիկների մեծագոյն մասը Ղարադաղից են եկել.

Թաւրիզից 6 ժամ դէպի հիւսիս կան երեք հայարնակ գիւղեր՝ Մուժումբար, Ալլամուլք և Սէօհրիւլ. այս գիւղերը Մուժումբար գետի աջ և ձախ ափերին են շինուած. Սէօհրիւլ 10 տուն միայն հայ ունի և մի Ֆրանսիացու սեպհականութիւն է. առաջ հայեր աւելի շատ են եղել և մի շատ ճաշակաւոր եկեղեցի ունին առանց քահանայի. Մուժումբարը Թաւրիզեցի հայոց ամարանոցն է, ընդարձակ մշակելի հողեր և արօտավայրեր ունի բայց ծոյլ գիւղացիները օգտուել չգիտեն. ամրան բազմաթիւ վրանարնակները գիւղատիրոջ մի նուէր տալով արօտավայրերից օգտուում են. Գիւղն ունի եկեղեցի և մի քահանայ. ուսումնարան ունեցել են երբեմն. զարմանալի է որ Թաւրիզեցիք ի-

րենց այսչափ մօտ եղող գիւղի վրայ իսկ ուշադրութիւն չեն դարձրել: Մուժուժարցիք հայ գիւղացիների աւանդական սովորութեան հակառակ հիւրասէր չեն: մեծ թւով պանդխտում են, երկրագործութիւնից զատ չարմատարութիւն (ձիապան) նոյնպէս անում են: 116 տուն են՝ բոլորը հայ: Մուժուժարութեան է Աներեղիթ անուն ուխտատեղին: Թաւրիզից եկող ուխտաւորները գիշերը այդ մատուռում են քնում: որպէս զի բժշկուին: Այստեղ կայ և հանքային ջրի աղբիւր:

Ալշամուլք Մուժուժարից 5 վերստ հեռաւորութեան վրայ 36 տուն հայ բնակիչ ունի: հիւրասէր են: ունին եկեղեցի և քահանայ: Անցեալ 1897 թուի Սայմաստում կատարուած դժբաղդ դէպքերից յետոյ, երբ պարսիկ կառավարութիւնը Օսմանցւոց պահանջմամբ ուղեց զաղմականներին Ղարաղաղի թրքաւնակ գիւղերն ուղարկել՝ Թաւրիզի Առաջ. Տեղապահ բողոքների հիման վրայ Թաւրիզում արգիլուեցան և ի վերջոյ այս երեք հայաբնակ գիւղերն ուղարկուեցան ձմեռն անցկացնելու համար: Տեղապահ հօր հանգանակութիւնով, Թաւրիզի Հայուհեաց ընկ. նպաստներով և Թաւրիզի հայոց անհատական նուիրատուութիւններով այս գաղթականները իւզով ու բրինձով աղբեցին և գարունը բացուելուց յետոյ հեռացեալ Թաւրիզ և Սալմաստ վերադարձան: ուր ապրելն աւելի հեշտ է և որ սահմանակից է իրենց հայրենիքին:

(կը շարունակուի).



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ԵԱՂՐԱՄՈՂՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ.*

Մարդու մաւոր զարգացման մակերեւութի համեմատ՝ la blague-ը այլեայլ կեր-

* Յայտնի քանաւոր Մախ նորդաւու նարեւ հրատարակել է „Psychologie de la blague“ յօդուածը: Թրանսիական la blague քաւոր ուրիշ լեզուով չի քաղցանկում և նշանակում է միակցամայն անհատութիւն, ստորութիւն, անգգաւորութիւն, անասպիւր յօդութիւն, խոխապանութիւն, ծաղր: որ բոլորը ի միասին մեր մարդկական անկեղծութիւնն քաւոր է արտայայտում: եւ որովհետեւ սոսք փաղափարութիւնը

պով է յայտնվում: Գռեհիկ ամբոխի մէջ — այդ յատկութիւնը մի տեսակ ստուգութիւն և զրախօսութիւն է՝ համեմաժ խեղկատակութեամբ և խորխուտութեամբ այն անձնաւորութեան դէմ, որին որ ծաղրել և կծել են ուղում: Բաւական է, որ ծաղրածուն ունենայ շատ ու քիչ անսանձ երեւակայութիւն և անըզգամ լեզու: Ժողովրդական իմացմամբ la blague-ը նշանակում է մի հտպիտ և միմոս, որ միշտ ձգնում է խաղք ու խայտառակ անել անրիժ և ալմաս մարդուն: մեծ պատիւ համարելով, որ կարողանում է ամբոխի ծիծաղը շարժել, բայց այդ բառով նկարագրում են նաեւ այնպիսի շողակրատ-շարլատանին, որ ծաղր ու ծանակի հնարքով ձգնում է ստակ դուրս քաշել միամիտներից և ամօթխածներից, որոնց շփոթեցնել և վախեցնելը դժուարին բան չէ:

Իսկ փոքրամասն իմացական դասակարգի զաղափարով՝ la blague-ը մի տեսակ երգիծանութիւն և սատիւրա է, որի նպատակն է յայտնի անձնաւորութիւններն ու սրբութիւնները ծաղրալի կացուցանել, բուն իսկութիւնը եղծանելով, ծեքելով և նշաւակելով: Այսպիսի խնդումը մասամբ աւելի բարձր կարգի է, քան սիւնքորի բիրտ մօրստութիւնը, բայց հարկաւոր է, որ մարդ վայրիվերոյ դիտելու շնորհք ունենայ, անգութ լինի և սարսափելի ինքնահաւանութեամբ ծարակուած լինի: Ծաղրողը ոլիմալիական բարձրութիւնից է նայում իւր ծաղրած մարդու վերայ: Իւր երեւակայութեամբ՝ նա ինքն իրան զգում է «փառահեղ» ծիծաղականի բարձրութեան վերայ, որի տակը իբր թէ չնչին արարածներ են սողում: Նորա աչքում ծիծաղելի և անարգական է այն ամենայն, ինչ որ իւր անձ-

մեր ընկերական կեանքի և մամուլի մէջ մեցրել է նաեւ la blague-ը, դասակարգ զիտով ու փառացած արտով մեծ մեծ շարդիլը, որ որ քացի անկեղծութիւնից ուրիշ աւելի քաւեմանութիւն չի պահանջում, այսինքն ոչ զիտութիւն, ոչ մեքի խոտութիւն, ոչ քաղանդ և ոչ ուրիշ անաւերութիւն, այս ուրեմն աւելորդ չէ այդպիսի հոգեկան վիճակի համառօտ կկարագրութիւնը շեշտ, մանաւանդ որ այդ ծագում է մի անկանաւոր գրից: Նա իւր մասնագիտութեամբ թփշիկ վնկելով, հասկանալի է, որ յօդուածին տուել է իւր մասնագիտութեան դրոշմը: